

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿԻ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՏԱՐԱԾՔԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 18-Ի N 1046-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո թ ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) «Ջրվեժ» անտառապարկի սահմանների նկարագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Ջրվեժ» անտառապարկի հատակագիծը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) «Ջրվեժ» անտառապարկի տարածքի չափը՝ 400.43 հեկտար:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով ամրացված՝ «Ջրվեժ» անտառապարկի 400.43 հեկտար հողամասի և այլ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը՝ «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփական միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հողային ֆոնդի ընթացիկ հաշվեկշռման ժամանակ մարզի հողային հաշվեկշռում սահմանված կարգով կատարել համապատասխան փոփոխություն:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի «Արգելոցապարկային համալիր» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 1046-Ն որոշման 6-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) «Էրեբունի» պետական արգելոցի և «Սև լիճ» ու «Որդան կարմիր» պետական արգելավայրերի, ինչպես նաև «Ջրվեժ» անտառապարկի, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրապարկի, Վանաձորի «Վանաձոր» դենդրապարկի, Բերդի «Սորաններ» դենդրապարկի և Իջևանի դենդրապարկի հողատարածքների անտառաշինական ու հողաշինարարական քարտեզների հիման վրա մինչև 2010 թվականը՝ սահմանված կարգով ապահովել «Էրեբունի» պետական արգելոցի և «Սև լիճ» ու «Որդան կարմիր» պետական արգելավայրերի, ինչպես նաև «Ջրվեժ» անտառապարկի, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրապարկի, Վանաձորի «Վանաձոր» դենդրապարկի, Բերդի «Սորաններ» դենդրապարկի և Իջևանի դենդրապարկի քարտեզագրումը, դրանց ու դրանց պահպանման գոտիների սահմանների ճշգրտումը և դրանք, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվելուց հետո, ամրացված հողամասերի ու այլ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը.»:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

09_0684

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2009 թվականի

հունիսի 18-ի N - Ն որոշման

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ջրվեժ» անտառապարկը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հարավ-արևմտյան մասում:

«Ջրվեժ» անտառապարկի ընդհանուր տարածությունը 400,43 հեկտար է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ջրվեժ» անտառապարկը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հարավ-արևմտյան մասում:

Հեռավորությունը մարզկենտրոն Արսիվյան քաղաքից 8,5 կմ է:

«Ջրվեժ» անտառապարկը «Ա»-«Բ» և «Ե»-«Դ» հատվածներով սահմանակից է

Ողջաբերդ համայնքին, «Գ»-«Ա», «Դ»-«Ե» հատվածով՝ Ջրվեժ համայնքին, իսկ «Բ»-«Գ» հատվածով՝ Երևան քաղաքին:

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿԻ - ՈՂՋԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՍԱՀՄԱՆԱԳԻԾ «Ա»-«Բ»

«Ա» հանգուցային կետից սահմանը 750 մ ձգվում է հարավ՝ հասնելով դաշտային ճանապարհին, ձգվում նրա եզրով դեպի հարավ-արևմուտք՝ 150 մ, այնուհետև, ճանապարհի եզրով շարունակվելով դեպի հարավ-արևելք, բարձրանում է բլրի վրա,

09_0684

2

որտեղից էլ շարունակում է ջրբաժանով ձգվել արևմուտք՝ հասնելով մինչև Խաչիսար լեռան մոտ գտնվող թամբոցային շրջան, այնուհետև թեքվում է հարավ և լեռան հարավային լանջի ձորակով հասնում մինչև Երևան քաղաքի վարչական սահմանը՝ «Բ» հանգուցային կետ՝ կազմելով ընդհանուր 3948 մ:

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿԻ - ՈՂՋԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՍԱՀՄԱՆԱԳԻԾ «Ե»-«Դ»

«Ե» հանգուցային կետից սահմանը 194 մ ձգվում է հարավ՝ հասնելով լեռան գագաթային մաս, այնուհետև ջրբաժանով ձգվում է հարավ-արևմուտք, իջնում լանջով և հասնում Երևան-Գառնի խճուղի, որտեղից էլ ճանապարհի եզրով շարունակվում է մինչև «Դ» հանգուցային կետ՝ կազմելով ընդհանուր 1914 մ:

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿԻ - ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՍԱՀՄԱՆԱԳԻԾ «Բ»-«Գ»

«Բ» հանգուցային կետից սահմանը 103 մ ձգվում է հարավ-արևմուտք՝ հասնելով

«Գ» հանգուցային կետ:

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿԻ - ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՍԱՀՄԱՆԱԳԻԾ «Գ»-«Ա»

«Գ» հանգուցային կետից սահմանը ձորն ի վեր բարձրանում է հյուսիս-արևմուտք և լեռան հարավ-արևմտյան լանջի ոլորաններով ձգվում մինչև խճուղի, այնուհետև խճուղու եզրով հասնում գերեզմանոց՝ շրջանցելով այն, հասնում է գագաթային, որտեղից Երևան-Գառնի խճուղուն զուգահեռ ձգվում է մինչև Ձորաղբյուրի խաչմերուկի

09_0684

3

մոտ՝ հասնելով «Ա» հանգուցային կետ՝ կազմելով 11528 մ բնագիծ: Այնուհետև, անցնելով ճանապարհը Ջրվեժի ամառանոցների սահմանով, բարձրանում է լանջն ի վեր և հասնում «Ա» հանգուցային կետ՝ կազմելով 12834 մ բնագիծ:

«ՋՐՎԵԺ» ԱՆՏԱՌԱՊԱՐԿԻ - ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՍԱՀՄԱՆԱԳԻԾ «Դ»-«Ե»

«Դ» հանգուցային կետից, որը գտնվում է Երևան-Գառնի խճուղու եզրին, սահմանը Ջրվեժի ամառանոցների սահմանով բարձրանում է լանջն ի վեր և հասնում «Ե» հանգուցային կետ՝ կազմելով 1054 մ բնագիծ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տիգրան Սարգսյան